ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «30.05» 2023 թ.

Փրոջեքթ Հարմոնի հայկական մասնաճյուղը, այսուհետ՝ Մասնակից 1 կամ Փրոջեքթ Հարմոնի, ի դեմս տնօրեն Մարիամ Մարտիրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության և լիազորագրի հիմա վրա, մի կողմից, և **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը, (այսուհետ՝ Մասնակից 2 կամ համալսարան),** ի դեմս ռեկտոր Երվանդ Սերոբյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, **երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր**, կնքեցին սույն Համատեղ Գործունեության Պայմանագիրը, այսուհետ՝ **Պայմանագիր**, հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով, որ՝

- Մասնակից 1-ը 2022 թ. ապրիլի 15-ից մինչև 2027 թ. ապրիլի 14-ն իրականացնում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ Դոնոր) կողմից դրամաշնորհային 72011122CA00001 պայմանագրով ֆինանսավորվող **«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն»** ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի նպատակն է բարելավել Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու ընդլայնել դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը,
- «Կրթության մասին» **ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով** Կրթության բովանդակությանը ներկայացվող **ընդհանուր պահանջները** սահմանում են, որ կրթության բովանդակությունը, ի թիվս այլ ուղղությունների, ներառում է նաև քաղաքացիական հասարակության կայացումը և զարգացումը, հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը, իսկ հանրակրթությունը սահմանող **18-րդ հոդվածը** ներառում է «անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը», «գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը»,
- համալսարանի կանոնադրության հոդված 16. ՇՊՀ-ի նպատակի ենթակետերը ներառում են՝ «4). բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը (որոնց աշխատանքն ուղղակիորեն առնչվում է վերոնշյալ օրենքի Հ11-ի և Հ18-ի դրույթներին), «9). բնակչության շրջանում գիտելիքների տարածումը և նրա կրթական մակարդակի բարձրացումը», «10). սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական ու քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում», ինչպես նաև իր «2023-2027 զարգացման ռազմավարական ծրագրի» տեսլականի համաձայն համալսարանը «հավակնում է լինել... համայնքային կենտրոն... քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում»:

1.1. Կողմերը համաձայնում են համատեղ ջանքերով համալսարանում գործարկել **«Քաղաքացիական Կրթության Կենտրոն» նախագիծը** (այսուհետ՝ ՔԿԿ), համաձայն Պայմանագրի **Հավելված 1-ի «ՔԿԿ Մեթոդական ուղեցույցի»**, իրականացնելու անվճար դասընթացներ և տարատեսակ միջոցառումներ՝ ուղղված համալսարանի ուսանողների, դասախոսական կազմի, ինչպես նաև համայնքի երիտասարդների սոցիալական և տեխնիկական կարողությունների զարգացմանը, քաղաքացիական մասնակցության հնարավորությունների ընձեռնմանը և երիտասարդական նախաձեռնությունների խթանմանը:
1.2. **Մասնակից 1-ն** ապահովում է ՔԿԿ-ի մեթոդական ուղենիշները, հոգում դրա գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը և միջոցառումների կազմակերպման տեխնիկական հարցերում աջակցում է ՔԿԿ-ի համակարգողներին, **Մասնակից 2**-ը մասնակցում է ՔԿԿ նախագծի մեթոդաբանության փորձարկմանը և առաջարկում է բարելավման ուղիներ՝ ապահովելով համապատասխան պայմաններ, նախաձեռնում է ՔԿԿ իրազեկմանն ուղղված միջոցառումներ համալսարանում և համայնքում, օժանդակում է շահառու երիտասարդների և դասախոսների ներգրավմանը, առաջարկում և նախաձեռնում է ՔԿԿ նպատակներին ծառայող այլ միջոցառումներ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Մասնակից 1-ը պարտավորվում է

2.1.1. **Մասնակից 2**-ի հետ համատեղ մշակել ՔԿԿ գործունեության ամենամյա օրինակելի պլանը և աջակցել դրա իրականացմանը նյութապես և մեթոդապես, կանոնավոր կերպով քննարկել ՔԿԿ գործունեության ընթացքը, նախատեսվող միջոցառումների ժամանակացույցը և խորհրդակցել համայնքի բնակչության շրջանում ՔԿԿ վարկանիշի բարձրացման, նախաձեռնված աշխատանքների իրազեկման և կազմակերպվող դասընթացներում նոր շահառուների ներգրավման հարցերի շուրջ:
2.1.2. ՔԿԿ ծրագրային կարիքներից ելնելով՝ վերջինիս գործունեության համար **Մասնակից 2**-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել անհրաժեշտ գույք՝ ըստ Հավելված 2-ի (այսուհետ՝ **ՔԿԿ Գույք**), որում նշված է Գույքի նախատեսված շրջանակը և նվազագույն մասնագրերը, որոնց հիման վրա սույն Պայմանագրի կնքումից հետո **Մասնակից 1**-ը կկազմակերպի ՔԿԿ Գույքի գնման գործընթացը: ՔԿԿ Գույքի վերջնական տվյալները արտացոլված կլինեն Կողմերի միջև ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտում, որը կհամարվի Պայմանագրի անբաժանելի մաս: Պայմանագրի գործունեության ողջ ընթացքում Դոնորը կպահպանի ՔԿԿ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:
2.1.3. Ծրագրի ավարտից հետո, Ծրագրի շրջանակում ձեռք բերված ակտիվների, ներառյալ ՔԿԿ Գույքի օտարման նպատակով Դոնորին ներկայացնել այդ ակտիվների մասին տեղեկություններ և առաջարկություն՝ վերջինիս սեփականության հետագա իրավունքի հարցը որոշելու նպատակով: Ըստ այդմ, Դոնորի կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն՝ Կողմերի **բարեխիղճ** համատեղ գործունեության դեպքում ՔԿԿ Գույքի սեփականության իրավունքը ենթակա է նվիրաբերման Մասնակից 2-ին՝ **ՔԿԿ գործունեությունն ինքնուրույն շարունակելու համար**: Համատեղ գործունեությունը համարվում է բարեխիղճ, եթե պայմանագիրը վաղաժամ չի լուծվել որևէ Կողմի՝ Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հիմքով:
2.1.4. Ապահովել ՔԿԿ մուտքի դռան (հարակից պատի) ցուցանակի և այլ իրազեկման պաստառների ու նյութերի պատրաստումը:
2.1.5. Պայմանագրի գործունեության ընթացքում ՔԿԿ կարիքների համար համալսարանում տեղակայված սարքերի խափանման դեպքում, կազմակերպել դրանց վերականգնման, գործունակության ապահովման և տեխնիկական վերազինման հարցերը և հոգալ համապատասխան ծախսերը:

2.1.6. Վճարել համալսարանի այն 2 ուսանողների ուսման վարձը, որոնք, ըստ Կողմերի միջև համաձայնեցված չափանիշների՝ մրցութային կարգով ընտրվել են որպես ՔԿԿ համակարգողներ: Յուրաքանչյուր ՔԿԿ-համակարգողի տարեկան ուսման վարձը կարող է փոխհատուցվել մինչև 450,000 դրամի չափով:
2.1.7. Պատրաստել ՔԿԿ համակարգողներից պահանջվող գործողությունների շրջանակն ամրագրող եռակողմ (**Մասնակից 1, Մասնակից 2, ուսանող**) պայմանագրի նախնական տարբերակը և համաձայնեցնել դրա վերջնական տարբերակը **Մասնակից 2**-ի հետ, ինչպես նաև կազմակերպել պայմանագրերի համատեղ կնքման գործընթացը:
2.1.8. ՔԿԿ 2 համակարգողների համար կազմակերպել ՔԿԿ գործունեությանն ուղղված վերապատրաստման դասընթացներ և հոգալ վերապատրաստմանն առնչվող բոլոր ծախսերը:

2.2. Մասնակից 2-ը պարտավորվում է

2.2.1. Պայմանագրի 1.1 կետում նշված և Հավելված 1-ի VI գլխի պահանջներին համապատասխանող ՔԿԿ-ն գործարկելու համար առանձնացնել Հավելված 3-ում ներկայացված տեխնիկական նկարագրով լսարանը (այսուհետ՝ **ՔԿԿ լսարան):**
2.2.2. **Մասնակից 1-ին** տեխնիկապես աջակցել ՔԿԿ լսարանը համապատասխան կահույքով և համակարգչային սարքավորումներով հագեցնելու կազմակերպչական հարցերում (օր՝. չափագրում, ներքին ցանցերի, գույքի, սարքերի տեղադրության հստակեցում, լսարանի մուտքի դռան դրսի կողմում (կամ հարակից պատին) ՔԿԿ ցուցանակի տեղադրում, որի վրա կնշվի Ծրագրի, Դոնորի և Կողմերի անվանումները):
2.2.3. Սահմանել ՔԿԿ Գույքի համար նյութական պատասխանատվություն կրող անձանց շրջանակը և գույքային մասով փոխհարաբերությունները:
2.2.4. Ապահովել ՔԿԿ համակարգողների անարգել մուտքը և անխոչընդոտ աշխատանքի պայմանները ՔԿԿ լսարանում նրանց համար նախատեսված աշխատանքային հատվածում և աշխատանքային ժամերին՝ 14:30-18:00 երկուշաբթի-շաբաթ օրերին:
2.2.5. Համալսարանի շինությունների ընդհանուր անվտանգության միջոցառումների շրջանակում ապահովել նաև ՔԿԿ Գույքի անվտանգությունը:
2.2.6. Հոգալ ՔԿԿ լսարանի մաքրության և կոմունալ կարիքները (էլեկտրասնուցում, սանհանգույց և այլն):
2.2.7. Ներգրավվել ՔԿԿ դասընթացների և միջոցառումների կազմակերպման աշխատանքներում, ներառյալ՝ մասնակցելով բանախոսների և հանրաճանաչ հյուրերի շրջանակի որոշմանը, հրավիրմանը, ընդունելությանը՝ համաձայն համատեղ որոշված ժամանակացույցի:
2.2.8. Նպաստել ՔԿԿ դրական վարկանիշի ձևավորմանը լայն հանրության շրջանում՝ ներառյալ համալսարանի անձնակազմի, ուսանողության շրջանում և համայնքում ՔԿԿ գործունեության մասին իրազեկման միջոցով, ինչպես նաև թույլատրելով **Մասնակից 1-ին** և ՔԿԿ համակարգողներին ըստ անհրաժեշտության հրավիրելու տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ լուսաբանելու ՔԿԿ միջոցառումները:

2.3. Մասնակից 1-ն իրավունք ունի

2.3.1. ՔԿԿ-ն գործարկելու նպատակով **Մասնակից 2**-ից պահանջել ՔԿԿ լսարանի տրամադրումը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30-օրյա ժամկետում:
2.3.2. Պահանջելու 2.2 կետում ամրագրված պարտավորությունների կատարումը **Մասնակից 2**-ի կողմից, իսկ դրանց ուշացման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում քննարկման դնելու պայմանագրի լուծման հարցը:

2.3.3. Ինքնուրույն գնահատել ՔԿԿ համակարգողների կատարողականը և որոշել նրանց հետ համագործակցության հետագա ընթացքը՝ ելնելով Ծրագրի կարիքներից և իր կազմակերպական կարգերի և ընթացակարգերի պահանջներից:

2.4. Մասնակից 2-ն իրավունք ունի

2.4.1. ՔԿԿ-ն գործարկելու նպատակով **Մասնակից 1**-ից պահանջել ՔԿԿ Գույքի տեղադրման աշխատանքների լիարժեք կատարումը ՔԿԿ լսարանը տրամադրելուց հետո ողջամիտ ժամկետում՝ համաձայնեցված կողմերի միջև:
2.4.2. Պահանջելու 2.2 կետում ամրագրված պարտավորությունների կատարումը **Մասնակից 1-ի** կողմից, իսկ դրանց ուշացման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում քննարկման դնելու պայմանագրի լուծման հարցը:
2.4.3. Ստանալ ՔԿԿ գործունեության եռամսյակային հաշվետվությունները և կատարել առաջարկություններ ՔԿԿ աշխատանքների բարելավման ուղղությամբ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Պայմանագիրը գործում է **2023թ. մայիսի 23-ից և վավեր է մինչև 2027թ. ապրիլի 14-ը ներառյալ:**
3.2. Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով առնվազն 30 օր առաջ:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Պայմանագրի ցանկացած փոփոխություն հնարավոր է միայն Կողմերի երկուստեք և գրավոր համաձայնությամբ:
4.2. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

5.1. Մասնակից 1

Մարիամ Մարտիրոսյան
«Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղի տնօրեն

Պարոնյան 8/8, ք. Երևան, 0015 (գրանցման հասցե), Պռոշյան 2/2 (գործ. հասցե), ՀՀ
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700 24709020100 ՀՀ դրամ
ՀՎՀՀ 00065379

.....

5.2. Մասնակից 2

Երվանդ Սերոբյան
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր

Պ. Սևակ 4, ք. Գյումրի, 3126, ՀՀ,
Հայէկոնոմբանկ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Հ/Հ 163528999994
ՀՎՀՀ 05502348

.....